«ԹԵԼ-ՍԵԼ» ՓԲԸ «ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ» ՔԱՂՎԱԾՔ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Տեղեկատվական անվտանգության (այսուհետ՝ «ՏԱ») քաղաքականությունը հանդիսանում է «ԹԵԼ-ՍԵԼ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) տեղեկատվական անվտանգության ապահովման հիմնական ներքին իրավական ակտը:

1.2 ՏԱ քաղաքականությունն արտահայտում է Տեղեկատվական Անվտանգության Կառավարման Համակարգի (այսուհետ՝ ՏԱԿՀ) վերաբերյալ Ընկերության ղեկավարության դիրքորոշումը:

1.3 ՏԱԿՀ-ն հանդիսանում է Ընկերության կառավարման ընդհանուր համակարգի անբաժանելի մաս:

1.4 ՏԱԿՀ-ն կոչված է ապահովելու տեղեկատվական անվտանգությունը՝ վերլուծելով, պարբերաբար վերանայելով և հետևողականորեն բարելավելով դրա իրականացման համար կիրառվող միջոցները:

2. ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ

2.1 Սույն Քաղաքականությունը ենթակա է պարտադիր կատարման Ընկերության բոլոր ղեկավարների և աշխատակիցների կողմից, ներառյալ պայմանագրային հիմունքներով աշխատանքներ իրականացնող և/կամ ծառայություններ մատուցող անձանց, որոնք ունեն հասանելիություն Ընկերության ենթակառուցվածքին, ովքեր մասնակցել են սույն Քաղաքականության մշակմանը և համաձայնեցմանը, իրենց ֆունկցիոնալ պարտականությունների կատարման ընթացքում օգտվում են դրանից:

3. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

3.1 ՏԱ նպատակն է.

3.1.1 ապահովել Ընկերության տեղեկատվական գործընթացների անվտանգությունը՝ Ընկերության առջև դրված խնդիրները լուծման նպատակով.

3.1.2 համապատասխանեցնել Ընկերության ՏԱԿՀ-ն ISO/IEC 27001:2013 միջազգային ստանդարտի պահանջներին:

3.2 Այն Ընկերությունում կիրառվող փորձի, կանոնների, սկզբունքների ու կարգերի մի ամբողջական համակարգ է, որը կոչված է պաշտպանելու և բաշխելու տեղեկատվական ռեսուրսները:

4. ՏԱԿՀ-Ի ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

4.1 Ընկերությունը հետևողականորեն բարելավում է ՏԱԿՀ-ի արդյունավետությունը՝ ՏԱ քաղաքականության, անվտանգության նպատակների, աուդիտի արդյունքների,

մշտադիտարկման վերլուծության միջոցով և կիրառելով ուղղիչ և կանխարգելիչ գործողություններ:

4.2 Ընկերությունը քայլեր է ձեռնարկում՝ առկա և հնարավոր անհամապատասխանությունների և խախտումների պատճառները բացահայտելու և դրանք վերացնելու ուղղությամբ:

5. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

5.1 Ընկերության տեղեկատվական անվտանգության գործառույթները կոորդինացվում են SS անվտանգության մասնագետի կողմից:

5.2 ՏԱ ապահովման պարտականությունները բաշխվում են հետևյալ կերպ.

5.2.1 սույն քաղաքականության իրականացման ապահովման համար պատասխանատու է SS անվտանգության մասնագետը,

5.2.2 Ընկերության բոլոր բաժինները պատասխանատու են ՏԱ քաղաքականության պահանջների կատարման և անվտանգության միջոցների պատշաճ կիրառման համար,

5.2.3 Ընկերության աշխատակիցների պարտականությունները ներառում են նաև ՏԱ-ին առնչվող պարտականություններ: